ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-21/1

ք. Երևան «16» մարտի 2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Գ. Ազիզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի N 216-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Սյունիքի մարզի սահմանամերձ Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

ա) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

բ) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

գ) ներկայացնել աշխատանքների առանձին տեսակների կատարման ժամանակացույցը,

դ) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. **Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 16 980 000 (տասնվեց միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ**: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման

ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին.

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության ձեռքբերման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ընդհանուր ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ, ոչ ավել քան 25 օրացուցային օրով՝ բանկային երաշխիքի ձևով ներկայացրած պայմանագրի ապահովումը հավաստող փաստաթղթի առկայությամբ:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011036994
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

<<Հայնախագիծ>> ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2470100038500000
ՀՎՀՀ 01503291

Տնօրեն՝

______________ Գ. Ազիզյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
16 .03.2021թ. կնքված
ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-21/1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
					հասցեն	ժամկետը
1	71241200/21	դրամ	16 980 000	1	ՀՀ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 25-րդ օրացուցային օրը ներառյալ՝ համաձայն Հավելված N 1.1-ի

Տեխնիկական բնութագիր

Օբյեկտի համառոտ նկարագիրը (փաստացի վիճակը), տեղակայման վայրը	ՀՀ Սյունիքի մարզի Գորիս խոշորացված համայնքի Շուռնուխ բնակավայրում նախատեսվում է 3.6 հա հողատարածքի վրա, որը ներկայում ծանրաբեռնված չէ որևէ կառուցապատմամբ և ճանապարհային ցանցով, կառուցել նոր բնակելի թաղամաս 20 բնակելի տներով՝ ներառյալ թաղամասի ճանապարհային ցանցը և ներթաղամասային ինժեներական համակարգերը: Բնակելի կառուցապատումը նախատեսվում է իրականացնել տիպարային բնակելի տներով՝ օգտագործելով տեղի ճարտարապետական ձևերը, ավանդական նյութերը՝ ձևավորելու համար տվյալ տեղանքին համահունչ քաղաքաշինական միջավայր:
Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը	**Նախատեսվում է** - ուսումնասիրել տարածքը և ձեռք բերել ինժեներաերկրաբանական տվյալների մասին հանույթ, - իրականացնել գեոդեզիական աշխատանքներ, - ելակետային երկրաբանական նյութերի և գեոդեզիական աշխատանքների արդյունքներով մշակել մեկ ընդհանրական գլխավոր հատակագիծ, որը պետք է ներառի ճանապարհային ցանցը, 20 բնակելի տներով կառուցապատման նախագիծը, ինչպես նաև թաղամասի հեռանկարային զարգացման ուրվագիծը՝ հիմք ընդունելով Պատվիրատուի կողմից ներակայացվող հողահատկացման սխեմաները և կառուցապատման սահմանները - նախագծով նախատեսել թաղամասի արտաքին ինժեներական ենթակառուցվածքները, որոնք պետք է մշակվեն հաշվի առնելով նաև թաղամասի հեռանկարային զարգացման ուրվագիծը - նախագծով նախատեսել ներքին բնակելի տների ինժեներական ենթակառուցվածքներ՝ սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, էլեկրամատակարարման, ինչպես նաև բնակելի տների ներքին հարդարում, - նախագծով նախատեսել տարածքների բարեկարգում, կանաչապատում, յուրաքանչյուր տան համար առանձին անասնագոմ, ամառային խոհանոց և տնամերձ հողամասի ցանկապատում, - ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների կառուցել-վերակառուցել արտաքին հաղորդակցուղիներ և այլն (բաշխիչ կայաններ, ենթակայաններ, ջրամատակարման, կոյուղու՝ կենտրոնացված մաքրման կայանով սարքավորումներ)՝ ծրագրի շրջանակներում անհրաժեշտ տարածքի ընդգրկումով. - նախագծման ընթացիկ աշխատանքներն աշխատանքային կարգով համաձայնեցնել Պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները և օգտագործելով արդի մոտեցումներ - յուրաքանչյուր բնակելի տան համար նախատեսվում է հատկացնել 1200 քմ հողատարածք - յուրաքանչյուր բնակելի տունը նախատեսվում է կառուցել շուրջ 110 քմ մակերեսով, որը նկուղային հարկում պետք է ունենա նաև նկուղ-ապաստարան շուրջ 24 քմ մակերեսով, որը պետք է ունենա առանձնացված ելք դեպի դուրս

	- ջեռուցման համակարգը նախատեսվում է իրականացնել էլեկտրականությամբ - տների տարածքների ցանկապատումը միմյանց միջև նախատեսվում է իրականացնել մետաղական ցանցից, իսկ առաջնամասերը և ետնամասերը գաբիոններով - բնակելի տների ճարտարապետությունը պետք է համապատասխանի տեղի ճարտարապետական առանձնահատկություններին և նախատեսվի տեղին բնորոշ հարդարման նյութերը **Նախատեսվում է մշակել նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ հետևյալ կազմով.** • Տարածքի գլխավոր հատակագիծ՝ ներառյալ թաղամասի զարգացման հետագա ուրվագիծը • Շուրջ 110քմ ընդհանուր մակերեսով նոր բնակելի տների կառուցման նախագիծ՝ յուրաքանչյուրը 1200 քմ հողատարածքի վրա, ներառելով անասնագոմի ու ամառային խոհանոցի կառուցման նախագծերը, ընտանիքների համապատասխան քանակի համար՝ նորմատիվային պահանջների և համայնքի կարիքի գնահատմամբ հաշվարկված • Տարածքի ճանապարհային ցանցի նախագիծ • Բնակելի տների ներքին ինժեներական համակարգերի նախագծեր • Թաղամասի արտաքին ինժեներական ենթակառուցվածքների կառուցման նախագիծ • Այլ ենթակառուցվածքներ ՝ ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների
Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	**Հիմնավորում՝** ՀՀ 2021թ պետական բյուջե ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի N 216-Ն որոշում **Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝ ելակետային տվյալներ** - ճարտարապետահատակագծային առաջադրանք (ներ) և տեխնիկական պայմաններ, - տարածքի անշարժ գույքի սեփականության վկայական/ներ - նախագծային առաջադրանք (կազմվում է Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ), - հանույթ, **Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝** - ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որ. <ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014 թվականի <ՀՀՀՇՆ 30-01-2014 <Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում> շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին> N263-Ն հրաման, - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020թ թիվ 102-Ն հրաման՝ ՀՀՇՆ 20.04-<Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր>, - ՀՕ-110-Ն 21.06.2014թ <Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին> ՀՀ օրենք, - ՀՀ կառավարության 04.05.2017թ <Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին> թիվ 526-Ն որոշում - ՀՀ կառավարության 25.12.2014թ թիվ 1504-Ն որ. <Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին>:
Նախագծման փուլերը	**Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝** ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ N128-Ն հրամանի համաձայն Նախագծահետազոտական աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել հետևյալ փուլերով՝ • 1-ին փուլ՝ տարածքի գլխավոր հատակագծի /20 բնակելի տներով/ և ճանապարհային ցանցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի լրակազմի մշակում և դրա քաղաքաշինական պարզ փորձաքննության անցկացում այլ լիցենզավորված կազմակերպության միջոցներով /տվյալ փուլը ենթակա է առանձին հանձման-ընդունման և դրա արդյունքում վճարման կատարած աշխատանքի դիմաց/ • 2-րդ փուլ՝ թվով 13 բնակելի տների կառուցման, դրանց ներքին ինժեներական համակարգերի մոնտաժման, բնակելի տների համար առանձնացված հողատարածքների բարեկարգման, յուրաքանչյուր տան համար անասնագոմի և ամառային խոհանոցի կառուցման, ինչպես նաև թաղամասի կառուցպատվող

	հատվածի ներտարածքային ինժեներական համակարգերի մոնտաժման ու անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան տեխնիկական պայմանների առկայության դեպքում, անհրաժեշտ ինժեներական այլ ենթակառուցվածքների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղերի մշակում և քաղաքաշինական պարզ փորձաքննության անցակցում այլ լիցենզավորված կազմակերպության միջոցով /տվյալ փուլը ենթակա է առանձին հանձման-ընդունման և դրա արդյունքում վճարման կատարած աշխատանքի դիմաց/
Նախագծի կազմը	**«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ»** **<u>Նախագծի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր</u>** 1. **Ընդհանուր բացատրագիր** 2. **Թաղամասի կառուցապատման գլխավոր հատակագիծ** 3. **Ճարտարապետաշինարարական մաս** - Ծավալահատակագծային լուծումներ, մասնագրեր և հանգույցներ /այդ թվում սենքերի կահավորման հատակագիծ/ - Եռաչափ մոդելավորում (3D) 4. **Կոնստրուկտիվ մաս** - Կոնստրուկտիվ լուծումներ, - Կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն 5. **Ինժեներական** (ներքին և արտաքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր) - էլեկտրամատակարարման, կոյուղու, ջրամատակարարման, ջեռուցման, և այլն, - Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն 6. Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ 7. Շինարարության կազմակերպման նախագիծ 8. Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ 9. Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ: 10. Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ (ինժեներատեխնիկական անվտանգություն, վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության միջոցառումներ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումներ) **Համաձայնեցումներ** *<u>Նախագծի համաձայնեցում</u>* 1. **Համայնքի ղեկավարի,** 2. **ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի,** 3. **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի,** 4. Ըստ անհրաժեշտության՝ (համայնքի ղեկավարի կողմից տրամադրվող ճարտարապետա-հատակագծային առաջադրանքի և տարածքի գլխավոր հատակագծով սահմանված պահանջների, տեխնիկատնտեսական հիմնավորման, ինչպես նաև հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների ու դրանց օգտագործման նկարագրի առկայությամբ)՝ **ՀՀ շրջակա միջավայրի նախարարության** հետ:
Այլ պահանջներ	***<u>Եզրակացություններ</u>*** Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում 1. Նախագծողի կողմից տարածքի գեոդեզիական աշխատանքներ և հանույթի պատրաստում 2. Նախագծի համաձայնեցումներ շահագրգիռ կողմերի հետ Փորձաքննություններ 1. քաղաքաշինական (պարզ) փորձաքննության ապահովում՝ Նախագծողի միջոցներով այլ լիցենզավորված կազմակերպության միջոցով, 2. շրջակա միջավայրի վրա ազդեցությունների փորձաքննության ապահովում /համաձայն ՀՀ օրենսդրության/՝ ըստ անհրաժեշտության **Շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ**

	- նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ, - նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ, - էներգաարդյունավետություն ապահովող միջոցառումների, սարքավորումների և նյութերի ցանկ Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները: **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ** Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում **ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ** Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով: Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 5 օրինակ՝ փաստաթղթային և էլեկտրոնային՝ AUTO CAD, ArchiCAD կամ այլ և PDF, նախահաշիվը 2 օրինակ՝ EXCEL տարբերակներով:
	ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ Ըստ անհրաժեշտության, եթե նախագիծը ենթակա է լինում պետական համալիր փորձաքննության *(եթե համալիր (այդ թվում պարզ) փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման»)*, նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում: **<u>ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ</u>** Նախագծային աշխատանքների ֆինանսավորումը կկատարվի մինչև 25.12.2021թ՝ քաղաքաշինական պարզ փորձաքննության դրական գրավոր եզրակացությունը, ինչպես նաև շահագրգիռ մարմինների գրավոր համաձայնեցումները սահմանված կարգով ձեռք բերելուց հետո:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011036994
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Հայնախագիծ>> ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2470100038500000
ՀՎՀՀ 01503291

Տնօրեն՝

_____ Գ. Ազիզյան
(ստորագրություն)

Հավելված N 1.1
16 .03.2021թ. կնքված
ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-21/1 պայմանագրի

Օրացուցային գրաֆիկ

ՀՀ Սյունիքի մարզի սահմանամերձ Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության

Հ/Հ	Կատարվելիք աշխատանքների անվանումը	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների նվազագույն ծավալը (արտահայտված ՀՀ դրամով)	Կատարվելիք աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը
1	2	3	4
1-ին փուլ	Տարածքի գլխավոր հատակագծի /20 բնակելի տներով/ և ճանապարհային ցանցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի լրակազմի մշակում և դրա քաղաքաշինական պարզ փորձաքննության անցկացում այլ լիցենզավորված կազմակերպության միջոցներով /տվյալ փուլը ենթակա է առանձին հանձման-ընդունման և դրա արդյունքում վճարման կատարած աշխատանքի դիմաց/	5 000 000	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 5-րդ օրացուցային օրը ներառյալ
2-րդ փուլ	Թվով 13 բնակելի տների կառուցման, դրանց ներքին ինժեներական համակարգերի մոնտաժման, բնակելի տների համար առանձնացված հողատարածքների բարեկարգման, յուրաքանչյուր տան համար անասնագոմի և ամառային խոհանոցի կառուցման, ինչպես նաև թաղամասի կառուցպատվող հատվածի ներտարածքային ինժեներական համակարգերի մոնտաժման ու անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան տեխնիկական պայմանների առկայության դեպքում, անհրաժեշտ ինժեներական այլ ենթակառուցվածքների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և քաղաքաշինական պարզ փորձաքննության անցակցում այլ լիցենզավորված կազմակերպության միջոցով /տվյալ փուլը ենթակա է առանձին հանձման-ընդունման և դրա արդյունքում վճարման կատարած աշխատանքի դիմաց/	11 980 000	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 25-րդ օրացուցային օրը ներառյալ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900001036994
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Հայնախագիծ>> ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2470100038500000
ՀՎՀՀ 01503291

Տնօրեն՝

Գ. Ազիզյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
16 .03.2021թ. կնքված
ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-21/1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/21	ՀՀ Սյունիքի մարզի սահմանամերձ Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության	-	-	5 000 000	16 980 000	16 980 000	16 980 000	16 980 000	16 980 000	16 980 000	16 980 000	16 980 000	16 980 000	16 980 000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011036994
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Հայնախագիծ>> ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2470100038500000
ՀՎՀՀ 01503291

Տնօրեն՝

_____ Գ. Ազիզյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 3
16 .03.2021թ. կնքված
ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-21/1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
16 .03.2021թ. կնքված
ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-21/1 պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Արդշինբանկ գլխ.գր.ՀՍՎ.

Վճարման հանձնարարական N 210312118196001 160

12/03/21 15/03/21 09:36:03 F209

Դեբետի հաշիվ	2470100038500000 / 30202	Գումար և արժույթ
Վճարողի բանկ	AM24700 AM24701 Արդշինբանկ գլխ.գր.ՀՍՎ.	1,698,000.00 AMD
Վճարողի ԱԱՀ կամ անվանում	ՀԱՅՆԱԽԱԳԻԾ ԲԲԸ 01503291 ԵՐԵՎԱՆՀԱՐԵՆՑԻ 1	
ՀՎՀՀ/ՀԾՀ	1801503291	
Հիմնական պարտ ԱԱՀ կամ անվանում		
Հիմնական պարտ ՀՎՀՀ/ՀԾՀ	01503291	
Կրեդիտի հաշիվ	900008000664	
Ստացող (Շահառուի) բանկ	AM90000 ՀՀ էկոնոմ.եվ ֆինանս.նախարարություն	
Ստացողի(Շահառուի) ԱԱՀ կամ անվանում	ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	
Ստացողի(Շահառուի) ՀԾՀ		
Գումարը և արժույթը բառերով	Մեկ միլիոն վեց հարյուր իննսունութ հազար ՀՀ դրամ	
Վճարման նպատակ	ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-21/1 ծածկագրով գնման ը նթացակարգի շրջանակներում պայմանագրի ապահովում	
Միջնորդավճար	0.00	Բանկի տարածքում ստացման ենթակա ՀՀ օրենսդրությամբ սահմանված տեղեկատվությունը ստանալուց հրաժարվել եմ
Շահառուին վճարման ամսաթիվ	15/03/21	

Կ.Տ. Վճարողի ստորագրություն 1 _____ 2 _____

Կատարողի ստորագրություն և ԱԱՀ